



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 403-Ա
20 հոկտեմբերի 2023 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքները համար Անի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեից նախատեսվող միջոցները հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 72211186, 48441300 մեկ անձից գնումներ կատարելու ընթացագրով՝ ապրանքների /մանրախիճ/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Էդգար Սաղաթեյան – Անի համայնքի ղեկավարի տեղակալ – ղեկավար

Անանիկ Ուռույան – Անի համայնքի ղեկավարի օգնական – անդամ

Վաչագան Հեպոյան – Անի համայնքապետարանի քաղաքաշինության,

հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետի ժ/պ՝ – անդամ

Վահագն Սարոյան – զարգացման, ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի

բաժնի առաջատար մասնագետի ժ/պ- անդամ

2. Վերը նշված ծառայության ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:
3. Գնման ժամանակացույցը սահմանել համաձայն պատվիրատուի կարիքների:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



«20» հոկտեմբերի 2023 թվական
Քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N.404-Ա
20 հոկտեմբերի 2023 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Անի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 72211186, 48441300 մեկ անձից գնումներ կատարելու ընթացագրագով՝ ծառայությունների /գնումների համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ, համակարգչային ծրագրային փաթեթներ/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Էդգար Սաղաթեյան – Անի համայնքի ղեկավարի տեղակալ – ղեկավար

Անանիկ Ուռումյան – Անի համայնքի ղեկավարի օգնական – անդամ

Անժելա Սաղաթեյան – Անի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, հարկերի հաշվառման, հավաքագրման բաժնի պետի Ժ/պ – անդամ

2. Վերը նշված ծառայության ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային

ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ
Զաքարյանին:

3. Գնման ժամանակացույցը սահմանել համաձայն պատվիրատուի կարիքների:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«20» հոկտեմբերի 2023 թվական
Քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 405 -Ա
20 հոկտեմբերի 2023 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Անի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 45221142 մեկ անձից գնումներ կատարելու ընթացագրով՝ ընդհանուր շինարարական աշխատանքների /ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հաղթանակ փողոցում գտնվող զբոսայգում տեղադրված հուշարձանի եվ հուշատաղտակի պատվանդանի տարածքի սալիկապատում/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Էդգար Սաղաթեյան – Անի համայնքի ղեկավարի տեղակալ – ղեկավար

Անանիկ Ուռումյան - Անի համայնքի ղեկավարի օգնական – անդամ

Վաչագան Հեպոյան - Անի համայնքապետարանի քաղաքաշինության,

հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետի ժ/պ – անդամ

Վահագն Սարոյան – զարգացման, ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի

բաժնի առաջատար մասնագետի ժ/պ- անդամ

2. Վերը նշված ծառայության ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:
3. Գնման ժամանակացույցը սահմանել համաձայն պատվիրատուի կարիքների:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«20» հոկտեմբերի 2023 թվական
Քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 406-Ա

23 հոկտեմբերի 2023 թվական

**ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՏՎՅԱԼ
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի» 237-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական * ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգի» 11-րդ և 12-րդ կետերի դրույթներով՝ **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձորակապ բնակավայրի բնակիչ Սեյրան Ռաֆիկի Մուրադյանին հետ վճարել VOLKSWAGEN VENTO 1.8 մականիշի, 35ML588 պետհամարանիշով մեքենայի համար վաճառքի հետևանքով չափից ավել վճարված 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<23>> հոկտեմբերի 2023 թվական
Քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242-2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 407-Ա

<<23>> հոկտեմբերի 2023 թվական. քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ/ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԹԱՆԴԻԼԻ
ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՈՒԹՅԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ
ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 35-րդ կետերի «բ» ենթակետի, 35.1-րդ, 36-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N 564-Ա որոշմամբ քաղաքացի Հարություն Ավթանդիլի Առաքելյանի կողմից համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0178 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի օժանդակ շինությունները ճանաչվել են օրինական, այն համարվել է Անի համայնքի սեփականությունը և անշարժ գույի նկատմամբ իրավունքները ենթարկվել են պետական գրանցման (վկայական՝ 03112022-08-0065)։

որոշում եմ՝

1. Քաղաքացի՝ Հարություն Ավթանդիլի Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 69.42 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունները, որից շվաքարան՝ 47.29 քառակուսի մետր, պարիսպներ՝ 7.1, 2.85, 3.87, 8.31 քառակուսի մետր և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0178 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04121 հեկտար հողամասը (վկայական՝ N 03112022-08-0065, հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Բարեկամության փողոց 80/3 շվաքարան,

պարիսպ), ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքի մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Հարություն Ավթանդիլի Առաքելյանին (անձնագիր՝ AT0533658, տրված՝ 04.08.2020 թ, 012-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Ֆուչիկի փողոց, շենք 25/2, բն.13):

2. Օրինական ճանաչված շինությունների և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի «գ» ենթակետի համաձայն, ինքնակամ կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 15-րդ գոտում ընդգրկված Անի համայնքի Մարալիկ քաղաքի համար սահմանված շինության **0.1028** գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

69.42 քառակուսի մետր X 20 000 դրամ X 0.1028 = 142 730 (մեկ հարյուր քառասուններկու հազար յոթ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Բնակելի նշանակության ինքնակամ շինությունների պահպանման և սպասարկման համար նախատեսված բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 15-րդ գոտում ընդգրկված Անի համայնքի Մարալիկ քաղաքի համար սահմանված է **792** Հայաստանի Հանրապետության դրամ, կադաստրային արժեքով օտարվող հողամասի մակերեսը կազմում է **412.1** քառակուսի մետր, որի հաշվարկով հողամասի վաճառքի գինը կազմում է՝

412.1 քառ. մետր X 792 դրամ = 326 390 (երեք հարյուր քսանվեց հազար երեք հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

գ) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝ **469 120 (չորս հարյուր վաթսուինը հազար մեկ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ**, որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի՝ **900495101447** հաշվեհամարին:

գ) Որոշման սույն կետի <<գ>> կետով ձևավորված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը, համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված **26 000 /քսանվեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ** վճարները՝ վճարման 10/10/22 (7101) 221010093221049-803 և 10/10/22 (415) 111010094465049-806 անդորրագրերի հիման վրա:

դ) Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունվելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը

չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

ե) Ինքնական կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին քաղաքացի Հարություն Ավթանդիլի Առաքելյանին պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



Ա. ՍԱՐԴԵԿՅԱՆ

<<23>> հոկտեմբերի 2023 թվական
քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 408-Ա

<<23>> հոկտեմբերի 2023 թվականի

քաղաք Մարալիկ

**<<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ կետերի, 16-րդ կետի <<բ>> ենթակետի, 20-րդ կետի դրույթներով, հիմք ըմբռնելով 2022-03-15, ծածկագիր թիվ 20225YFZT հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, հաշվի առնելով, որ <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /հետագայում Ընկերություն/ սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104 հասցեում գտնվող /Գազալիցկավորման կայան/ 08-003-020-001 կադաստրային ծածկագրով հողամասի վրա /Վկայական N 2609263, տրված՝ <<16>> 02 2009թ./ ինքնակամ կառուցված բնակչության սպասարկման օբյեկտների շինությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված օրինականացման պայմաններին, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի հանձնաժողովի կողմից կազմված Վարչական իրավախախտման վերաբերյալ 2022 թվականի հունիսի 7-ի արձանագրության համաձայն, ընկերությունը վճարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 500000 ՀՀ դրամ տուգանք /Վճարման հանձնարարական 220622005658999-324007855, ամսաթիվ 22/06/2022թ. (4108)/, ընդառաջելով հասարակական նշանակության շինությունները օրինական ճանաչելու վերաբերյալ Ընկերության գործադիր տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումին.

որոշում եմ՝

1. <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր.

Շահինյան փողոց, թիվ 104 հասցեում գտնվող /Գազալիցկավորման կայան/ 08-003-020-001 կադաստրային ծածկագրով հողամասի վրա /Վկայական N 2609263, տրված՝ <<16>> 02 2009թ/ ինքնական կառուցված 124.41 քառակուսի մետր արտաքին ընդհանուր մակերեսով բնակչության սպասարկման օբյեկտների շինությունները, որից հացատուն՝ 24.62, խոհանոց՝ 63.52, սպասասրահ՝ 34.84, պարիսպ՝ 1.43 քառակուսի մետր, ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնական կառույցներն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարի հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) բնակչության սպասարկման օբյեկտի շինությունները, որոնց արտաքին ընդհանուր մակերեսը կազմում է **124.41** քառակուսի մետր, որպես հասարակական նշանակության կառույցներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 15-րդ գոտում ընդգրկված Մարալիկ քաղաքի համար սահմանված շինության **0.1028** գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

124.41 քառակուսի մետր X 20 000 դրամ X 0.1028 = 255 787 (երկու հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Ինքնական շինությունների օրինականացման համար վճարի ենթակա գումարի չափը կազմում է **255 787 (երկու հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ**, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

դ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի բյուջեի 900495101447 հաշվեհամարին

օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժի կորցրած:

5. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատերեր՝ <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /Գործադիր տնօրեն՝ Բաբկեն Կառլենի Մակարյան, անձնագիր՝ AU0544815, տրված՝ 10.12.2021թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ. Թումանյան փողոց տուն 50, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման համար 48.110.00209, գրանցման ամսաթիվ՝ 2005-09-09, ՀՎՀՀ՝ 060011264) սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին <<Անի-Մարալիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒ**



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<23>> հոկտեմբերի 2023 թվական
քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 409-Ա

«23» հոկտեմբերի 2023 թվական

քաղաք Մարալիկ

<<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ /հետագայում Ընկերություն/, խախտելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսդրության պահանջները, առանց համապատասխան թույլտվության սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104 հասցեում գտնվող գազալիցակալորման կայանի /Վկայական N 2609263, տրված՝ <<16>> 02 2009թ/ պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-020-001 կադաստրային ծածկագրով հողամասի հարևանությամբ գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0166 կադաստրային ծածկագրով 0.04345 հեկտար մակերեսով հողամասում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104/1/ Ընկերության կողմից ինքնակամ կառուցվել և շահագործվում է 182.88 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակչության սպասարկման օբյեկտների շինություններ, որից խոհանոց՝ 85.96, հացատուն՝ 57.68, օժանդակ շինություն՝ 10.69, սանհանգույց՝ 8.25, պարիսպներ՝ 20.3 քառակուսի մետր:

Այսինքն՝ Ընկերությունը կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219¹-րդ հոդվածի 3-րդ մասի, 244⁹-րդ հոդվածի 5-րդ մասի, 281-283-րդ հոդվածների, 305-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 26-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի

աշխատանքային խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմված 2023 թվականի հոկտեմբերի 13-ի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընկերության նկատմամբ /Գրանցման համար՝ 48.110.00209, գրանցման ամսաթիվ՝ 2005-09-09, ՀՎՀՀ 06001264, գործադիր տնօրեն՝ Բաբկեն Մակարյան, անձնագիր՝ AU 0544815, տրված՝ 10.12.2021թ. 022-ի կողմից/ նշանակել **1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի **900495101124** հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:

2. Սույն որոշմը երեք օրվա ընթացքում ուղարկել Ընկերության գործադիր տնօրեն՝ Բաբկեն Մակարյանին /Հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Թումանյան թողոց, տուն 50/:

3 Որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերության տնօրինությանը սույն որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետում պատշաճ ծանուցման պահից:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ սույն որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



«23» հոկտեմբերի 2023 թվական
Քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 410-Ա

«24» հոկտեմբերի 2023 թվականի Բաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ՝ ՍԵՎԱԴԴԱ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ն որոշումը և Սևադա Մուշեղի Սաղաթելյանի դիմումը դրամական աջակցություն տրամադրելու վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձորակապ բնակավայրի բնակիչ՝ Սևադա Մուշեղի Սաղաթելյանին /բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Ձորակապ բնակավայր 8-րդ փողոց, տուն 5, անձնագիր՝ /ն/ք 006324552, տրված՝ 30.08.2017 թվականին, 022-ի կողմից/ Անի համայնքի 2023 թվականի բյուջեի բաժին 10, խումբ 07, դաս 01 գործառնական դասակարգման /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերի չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից /այլ նպաստներ բյուջեից/ տրամադրել 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«24» հոկտեմբերի 2023 թվական
Բաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 411-Ա

<<24>> հոկտեմբերի 2023 թվականի

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ/ <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՈՒԹՅԱԾ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ և 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 2-րդ, 33-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով 2022-03-15, ծածկագիր թիվ 2022ZRQL61 հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, հաշվի առնելով, որ <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104 հասցեում գտնվող /Գազալիցկավորման կայան/ 08-003-020-001 կադաստրային ծածկագրով հողամասի /Վկայական N 2609263, տրված՝ <<16>> 02 2009թ./ հարևանությամբ գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0166 կադաստրային ծակագրով 0.04345 հեկտար հողամասում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104/2/ <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ինքնակամ կառուցված բնակչության սպասարկման օբյեկտների շինությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված օրինականացման պայմաններին.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում գտնվող /հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104/2/, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0166 կադաստրային ծակագրերով 0.04345 հեկտար մակերեսով հողամասի վրա <<ԱՆԻ-ՄԱՐԱԼԻԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ինքնակամ կառուցված 182.88 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակչության սպասարկման օբյեկտների շինությունները /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 104/2/, որից խոհանոց՝ 85.96, հացատուն՝ 57.68, օժանդակ շինություն՝ 10.69, սանհանգույց՝ 8.25, պարիսպներ՝ 20.3 քառակուսի մետր, ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

2. Օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված սույն որոշման 1-ին կետում նշված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերը և շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

